

ԿԱՐԾԻՔ

Լևոն Սամվելի Մայիլյանի «Հանքավայրի հետախուզման և շահագործման համատեղմամբ ստորգետնյա մշակման համակցված համակարգի ստեղծումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ՀԱՊՀ-ին առնթեր 031 մասնագիտական խորհրդին «Օգտակար հանածոների հանքավայրերի մշակում և շահագործում» (դասիչ ԻԴ.02.01) մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Լեոնահանքային արդյունաբերությունը յուրաքանչյուր երկրի տնտեսության հումքային հենքն է և դրա զարգացման գրավականը: ՀՀ ընդերքը ներկայացված է տարատեսակ օգտակար հանածոների հանքավայրերով, մետաղական՝ ոսկու, արծաթի, պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, երկաթի, ոչ մետաղական՝ տուֆերի, պեղիտների, պեմզաների, ցեոլիտների, հրաբխային խարամների, բազալտների, գրանիտների, քարաղի և այլն, ստորգետնյա քաղցրահամ ու հանքային ջրերի հանքավայրերով: Տարեցտարի հումքի նկատմամբ աճող պահանջարկը խթան է հանդիսանում երկրաբանահետախուզական աշխատանքների լայնածավալ իրականացման և հանքավայրերի մշակման եղանակների կատարելագործման համար, միաժամանակ կիրառելով ոչ ավանդական մոտեցումներ, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ, որոնք պահանջում են գիտականորեն հիմնավորված նոր մեթոդական և կիրառական մշակումներ: Այս առումով ներկայացված աշխատանքը, որը նվիրված է հանքավայրի հետախուզման և շահագործման համատեղմամբ ստորգետնյա մշակման համակցված համակարգի ստեղծմանը, արդիական է և կարող է ունենալ կիրառական նշանակություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից՝ 100 անվանմամբ և շարադրված է 112 համակարգչային էջի վրա:

Ատենախոսության առաջին՝ «ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ», գլխում առանձնացվել են Հայաստանի Հանրապետության Ալավերդու և Կապանի պղնձի, Տերտերասարի, Թունդիի և Բարձրաղիի ոսկու հանքավայրերը, որոնց ընդհանրությունն է հանքաքարերի համեմատաբար հարուստ, սակայն փոքր քանակով պաշարների, ինչպես նաև գերազանցապես չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքամարմինների առկայությունը: Ներկայացվել են փոքր մասշտաբի մետաղական հանքավայրի արդյունաբերական գնահատման աշխատանքներում կամ շահագործման նախագծերում ընդունված հիմնական ինժեներական լուծումները լեռնագրությամբ պայմանավորված՝ հանքավայրերի բացման եղանակները, հանքաքարի պաշարների քանակից կախված՝ հանքահարստացուցիչ կոմբինատի արտադրական հզորությունները, հանքավայրերի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական առանձնահատկություններով պայմանավորված՝ ընդերքից

հանքաքարի արդյունահանման և հարստացման տեխնոլոգիաները: Վերլուծվել են արդյունաբերական գնահատման աշխատանքներում կամ շահագործման նախագծերում ընդունված չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքամարմինների հանքաքարի անջատ հանույթով և պոկված պարփակող ապարներով հանությային տարածության լցափակմամբ, հանքաքարի ենթահարկային պոկմամբ՝ ճեղքային հանույթով ու պահեստից հանքաքարի պոկմամբ ստորգետնյա մշակման համակարգերի տարբերակիչ առանձնահատկությունները, դրանց առավելությունները և թերությունները, ինչպես նաև կիրառման համաշխարհային փորձն ու տեխնիկատեխնոլոգիական ցուցանիշները:

Ատենախոսության երկրորդ՝ «ՓՈՔՐ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՆՔԱՄԱՐ-ՄԻՆԵՐԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳԻՏԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ», գլխում հետազոտվել են Հայաստանի փոքր մասշտաբի մետաղական հանքավայրերի չափազանց բարակ և բարակ հանքամարմինների շահագործման արդյունավետության բարձրացման ուղիները, վերլուծվել են Մեղրաձորի ոսկու, Ալավերդու պղնձի, Շահումյանի ոսկի-բազմամետաղային և այլ մետաղական հանքավայրերի արդյունաբերական գնահատման աշխատանքներում և շահագործման նախագծերում ընդունված փոքր հզորությամբ զառիթափ հանքամարմինների ստորգետնյա մշակման օպտիմալ համակարգերի ընտրությանը, կատարելագործմանը և նորերի ստեղծմանը նվիրված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, ներկայացվել են նշված մշակման համակարգերի առավելությունները և թերությունները, ինչպես նաև դրանց կիրառման համաշխարհային փորձը:

Երրորդ՝ «ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵՂԱՆԱԿՈՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՕՂՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ» գլխում բերվել է պրոֆեսոր Յու.Ա.Աղաբալյանի կողմից մշակված ընդերքի օպտիմալ յուրացման առաջին դասակարգումը, ցույց են տրվել խմբերում ընդգրկված խնդիրների լուծման ազդեցությունները հանքահարստացուցիչ ձեռնարկության տեխնիկատնտեսական ցուցանիշների վրա: Ներկայացվել են հանքավայրերի ստորգետնյա մշակման օպտիմալ համակարգերի ընտրության հայտնի մեթոդները, որոնցից առավել նպատակահարմար է դիտվել և ընտրվել պրոֆեսոր Յու.Ա.Աղաբալյանի կողմից առաջարկված մեթոդը, երբ օպտիմալ մշակման համակարգի ընտրության խնդիրը դիտարկվում է ընդերքի օպտիմալ յուրացման հիմնախնդրի շրջանակներում, և դրա լուծումն իրականացվում է կոնդիցիաների պարամետրերի միջոցով՝ օգտագործելով օգտակար բաղադրիչի «կրիտիկական պարունակություն» և հանքամարմնի «կրիտիկական հզորություն» գնահատանքային ցուցանիշները: Ներկայացվել են մետաղական հանքաքարերի ստորգետնյա արդյունահանման արդյունավետության բարձրացման նպատակով մշակման համակարգերի զարգացման, կատարելագործման և նորերի ստեղծման սկզբունքները, որոնցից վճռորոշ դեր ունեն համակարգերի «նեղ տեղերի» (թերությունների) բացահայտումը և այդ թերությունների լրիվ կամ մասնակի

վերացման համար աշխատանքային վարկածների մշակումը՝ ըստ հնարավոր միջոցառումների:

Չորրորդ՝ «ՀՀ ՓՈՔԲ ՄԱՍՇՏԱԲԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՐԵՐԻ ՀԱՆՔԱՄԱՐ-ՄԻՆԵՐԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵՂԱՆԱԿՈՎ ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ», գլխում հիմնավորվել է Հայաստանի մետաղական համեմատաբար փոքր, սակայն հարուստ հանքավայրերի և հանքերնակումների, այդ թվում՝ Թունդիիի ոսկու հանքավայրի վերաբերյալ դրամական և նյութական ռեսուրսների, ինչպես նաև ժամանակի ծախսի կրճատման նպատակով հանքավայրերի մանրագին հետախուզման և շահագործման՝ ըստ ժամանակի համատեղման նպատակահարմարությունը, հիմնավորվել է չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքամարմինների համար օպտիմալ մշակման համակարգերի կիրառումը:

Հեղինակի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում ստեղծվել է նոր համապիտանի ենթահարկային շտրեկներով՝ հանքաքարի ճեղքային հանույթով և վերընթացներից հանքաքարի պայթանցքերով պոկմամբ համակցված մշակման համակարգ, որը հնարավորություն է տալիս երկրաբանական ուսումնասիրման և շահագործման՝ ըստ ժամանակի համատեղման դեպքում ինչպես կայուն, այնպես էլ անկայուն հանքաքարի և պարփակող ապարներով ներկայացված չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքամարմինների կամ դրանց առանձին մասերի մշակումն իրականացնել անվտանգ ու հանքաքարի արդյունահանման բարձր որակաբանական ցուցանիշներով:

Ատենախոսության վերաբերյալ առկա են հետևյալ դիտողությունները և առաջարկությունները:

1. Հանքավայրում երկրաբանահետախուզական և շահագործական աշխատանքների համատեղման նպատակահարմարության հիմնավորումը իրականացվել է միայն Թունդիիի ոսկու հանքավայրի պայմաններում, մինչդեռ աշխատանքում հետազոտվել են նաև Հայաստանի փոքր մասշտաբի մետաղական՝ Ալավերդու և Կապանի պղնձի, Տերտերասարի և Բարձրադիրի ոսկու հանքավայրերը, որոնք գերազանցապես ներկայացված են չափազանց բարակ և բարակ զառիթափ հանքամարմիններով: Ցանկալի կլինեք աշխատանքում ներկայացնել ըստ ժամանակի երկրաբանահետախուզական և շահագործական աշխատանքների համատեղման պարագայում տնտեսական արդյունավետությունը նաև վերոնշյալ հանքավայրերի պայմաններում:

2. Ներկայացված աշխատանքում հիմնավորվել է ստեղծված նոր համապիտանի ենթահարկային շտրեկներով՝ հանքաքարի ճեղքային հանույթով և վերընթացներից հանքաքարի պայթանցքերով պոկմամբ համակցված մշակման համակարգի կիրառման դեպքում երկրաբանահետախուզական և շահագործական աշխատանքների համատեղման նպատակահարմարությունը, ներկայացվել են նոր մշակման համակարգի անվտանգու-

թյունն ու հանքաքարի արդյունահանման բարձր որակաքանակական ցուցանիշները, սակայն նշված մշակման համակարգի կիրառման սահմանափակումներն ու թերությունները չեն նշվել:

Ամփոփելով վերը շարադրյալը գտնում եմ, որ նշված դիտողությունները չեն ազդում կատարված աշխատանքի որակի վրա, իսկ ատենախոսությունը ունի գիտակիրառական մեծ նշանակություն, այն համապատասխանում է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ՀՀ ԲՈԿ-ի «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակը՝ Լևոն Սամվելի Մայիլյանը արժանի է «Օգտակար հանաժոների հանքավայրերի մշակում և շահագործում» (դասիչ ԻԴ.02.01) մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդիմախոս,
տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Լ.Ա.Հայրապետյան

Տեխ. գիտ. թեկնածու Լ.Ա.Հայրապետյանի ստորագրությունը հավաստում եմ.

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի

մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ

Ա.Ռ.Ղազարյան

03.08.2026թ.

